«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Դաշտային պարապմունքների ազդեցությունը ՆԶՊ առարկայի յուրացման արդյունավետության վրա»

Հետազոտող ուսուցիչ՝ Գագիկ Սողոմոնյան
անուն, ազգանուն

Արմավիրի «Տիգրան Մեծի»-ի անվան ռազմամարզական հատուկ վարժարան

Մենթոր ուսուցիչ՝ Լյուբա Հայրապետյան

ԱՐՄԱՎԻՐ- 2022

Հետազոտություն

«Դաշտային պրակտիկաների ազդեցությունը ՆՀՊ առարկայի յուրացման արդյունավետության վրա»

Բովանդակություն

1.Նախաբան էջ -2
2.Գրականության ակնարկ էջ -3
3.Գործնական համատեքստ էջ -4
4.Եզրահանգումներ էջ -11
5.Գրականության ցանկ էջ -12

Նախաբան

Միշտ էլ պարտվել են այն ազգերը, որոնք ունեցել են մեկ հենարան՝ քանակը: Կռվադաշտը միշտ էլ պատկանել է որակին: Նրան

են պատկանում
վաղվա
հաղթանակները:
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

Ռազմական մանկավարժությունը ապահովում է սովորողի՝ որպես ապագա զինվորի դաստիարակման, զինվորական կոլեկտիվին ինտեգրվելու գործընթացը: Ոչ միշտ է հնարավոր լինում հետաքրքրություն և ուշադրություն ձևավորել առարկայի կամ դասապրոցեսի մեջ՝ հիմնվելով միայն տեսական նյութի վրա, քանի որ այն ձանձրացնում է սովորողներին և ոչ բոլորն են հետաքրքրվում թեմայով: Օրինակ՝ «Կրակային պատրաստություն» թեման ուսումնասիրելիս, նյութը որքան էլ հետաքրքիր է, այնուամենայնիվ, սովորողների մեծ մասը միայն տեսական նյութը լսելուց կամ դասը կարդալուց հետո դժվարանում են ըմբռնել և վերարտադրել: Բացի այդ, ռազմական արվեստում գիտելիքների և հմտությունների անհրաժեշտ որակ ապահովելու համար պրակտիկ և դաշտային պարապմունքները ուղղակի անհրաժեշտություն են և ինչպես ասել է մեր ազգի անմնացորդ նվիրյալ զավակներից Գարեգին Նժդեհը՝ «Կռվադաշտը միշտ էլ պատկանել է որակին: Նրան են պատկանում վաղվա հաղթանակները»: Այդ որակը ապահովվելու համար պետք է սկսենք վարժարանից:
Այդ իսկ պատճառով որոշեցի կազմակերպել դաշտային պրակտիկ պարապմունքներ և ստուգել, թե ինչ արդյունավետություն կունենա տեսական նյութից հետո գործնական հմտությունների զարգացումը սովորողների գիտելիքների ու դեպի ռազմարվեստը հետաքրքրությունների բարձրացման վրա: Եվ ինչպես Արքիմեդն է ասել. «Գիտելիքը ոչինչ չարժի, եթե դու այն չես կարողանում կիրառել»: Իմ նպատակն է ստուգել դաշտային պարապմունքների արդյունավետությունը ՆՁՊ առարկայի ինտենսիվ ուսուցման վրա:

2. Գրականության ակնարկ

Վերջին շրջանում մանկավարժական արդյունավետ մոտեցումների, մեթոդների միջոցով ուսուցման բարելավման խնդրով շատերն են մտահոգված: Այդ իսկ պատճառով այս հարցը հետազոտությունների ուշադրության կենտրոնում է: Ինչպես նշում է Լ.Գևորգյանը իր «Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն» հոդվածում նեղ իմաստով մանկավարժական մեթոդաբանությունը ուսմունք է գիտական հետազոտության մեթոդների մասին, լայն իմաստով մեկնաբանվում է որպես տեսական ու պրակտիկ գործունեության իրականացման սկզբունքների ու եղանակների համակարգ, ինչպես նաև որպես ուսմունք այդ համակարգի մասին:

Ռազմական մանկավարժական հետազոտությունը գիտական և ճանաչողական գործունեության բարդ գործընթաց է, որն ուղղված է ռազմական կրթության որակի բարելավմանը, դրա կառուցվածքի, բովանդակության և տեխնոլոգիաների արդիականացմանը, վարժարանի շրջանավարտների մասնագիտական կարողությունների ձևավորմանը, մանկավարժական նորամուծությունների և գիտական կանխատեսումների կիրառմանը ռազմական մանկավարժական գործընթացում:

Ինչպես ասվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ հանրային քննարկման ներկայացված «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի 8-12-րդ դասարանների չափորոշչի նախագծում. «Դաշտային (ճամբարային) պարապմունքները հնարավորություն են տալիս իրականին մոտ պայմաններում մատուցել նյութը, ցուցադրել պահանջվող գործողությունները, իսկ սովորողներին՝ գործնական վարժանքներով յուրացնել թեման: Բացի երկարաժամկետ

ճամբարային փորձաշրջանից, նպատակահարմար է կազմակերպել դաշտային պարապմունքներ շաբաթ կամ կիրակի օրերին՝ աշակերտների և ծնողների համաձայնությամբ, դպրոցի ղեկավարության գիտությամբ: Ճամբարային պայմանները առավել մեծ հնարավորություններ են ստեղծում պարապմունքներն անցկացնել ինչպես ցերեկային, այնպես էլ երեկոյան ժամերին, ուսուցանել առանձին թեմաներ («Կողմնորոշում աստղերով», «Տեղաշարժ մթության մեջ», «Պահակային ծառայության անցկացում», «Քողարկված կրակատեղի պատրաստում» և այլն): Ճամբարային պատրաստության և ռազմամարզական խաղերի ընթացքում կարող են լուծվել հետևյալ խնդիրները՝ բնական միջավայրում տեսական գիտելիքների փորձնական ստուգում և ամրապնդում, հմտությունների և կարողությունների զարգացում անհատական և խմբային վարժանքներով, իրավիճակների մոդելավորում և իրական պայմաններում սովորողների խմբային համագործակցության զարգացում, հոգեբանական կայունության ապահովում, սեփական ունակությունները ճանաչելու և ինքնադրսևորելու հնարավորություն»:

Հաշվի առնելով վերը նշված չափորոշչային նախագիծը, ես որոշեցի անցկացնել դաշտային պարապմունք և միաժամանակ կատարել հետազոտություն:

3. Գործնական համառեքստ

Հետազոտությունը կատարել եմ Արմավիրի «Տիգրան Մեծի» անվան ռազմամարզական հատուկ վարժարանի 12-րդ դասարանում, որտեղ սովորում է 25 սան: «Կրակային պատրաստություն» թեմայից «Հրաձգային զենք» ենթաթեման ուսումնասիրելուց հետո, սովորողներին թեստտրվեց, որի արդյունքները այնքան էլ գոհացուցիչ չէին: ,Հրաձգային զենք ենթաթեման ուսումնասիրվել է 1 դասաժամում, ինչպես նաև վարժարանում իրականացվող լրացուցիչ պարապմունքների միջոցով:

Դասապլան

Ուսուցիչ՝Գագիկ Սողոմոնյան «Տիգրան Մեծ»-ի ՌՄՀ վարժարանի ՆԶՊ ուսուցիչ

Առարկա՝ՆԶՊ 11-րդ դասարան

Թեմա	Կրակային պատրաստություն
Օգտագործվող նյութեր	Պաստառներ, դիտակտիկ նյութեր, տեսահոլովակ, ուսումնական զենք,ԿԱ-74
Դասի նպատակը	Ներկայացնել Զինված ուժերում կիրառվող հրաձգային զենքերը և դրանց կիրառման ձևերը: Ուսումնասիրել հրաձգային զենքերի /ԿԱ-74, ԽՏԴ հրացան/ մարտավարա-տեխնիկական տվյալները: Սովորեցնել աշակերտներին դրանց ճիշտ կիրառումը:
Վերջնարդյունք	Աշակերտը կկարողանա բացատրել ինչ է հրաձգային զենքը և ինչի համար է նախատեսված,իմանա հրաձգային զենքերի /ԿԱ-74, ԽՏԴ հրացանի/ մարտավարատեխնիկական տվյալները և դրանց ճիշտ կիրառումը մարտի դաշտում:
Դասի ընթացք Մեթոդ Սկիզբ 5ր Հիմնական մաս 20ր Ամրապնդում 15ր Ամփոփում 5ր	 Ակտիվ դասախոսություն և հարցադրում Մտագրոհ «նախնական գիտելիքների ստուգում» Հարցեր 1.Ինճ է հրաձգային զենքը? 2.Հրաձգային զենքերի ինչ տեսակներ գիտեք? 3.ԿԱ-74-ի մարտավարա-տեխնիկական տվյալները: Գործնական աշխատանք.Հրաձգային զենքի ոչ լրիվ քանդել հավաքել: Ինչ սովորեցիք այսօր?

Թեստը պարունակում էր այսպիսի հարցեր:

Թեստ «Կրակային պատրաստություն:Հրաձգային զենք»

1. Ի՞նչի համար է նախատեսված հրաձգային զենքը:
2. Նշեք Ինքնաձիգի, ԿԳ-ի, ԿՁԳ-ի, ՁՀՆ-ի, ԴԴՀ-ի, 12,7 մմ ԽՏԴՀ-ի մարտավարատեխնիկական բնութագրերը:

3. Նշեք հրաձգային զենքի մասերի և մեխանիզմների աշխատանքի ճիշտ հաջորդականությունը լիցքավորման և հրաձգության ընթացքում:

4. Բացարեք հրաձգային զենքի զննման և նախապատրաստման նշանակությունը հրաձգությունից առաջ:

Թեստը ստուգելուց հետո ստացված միավորների ցուցանիշը այսպիսին էր.

«4» միավոր ստացել էին 4 սան,

«5» միավոր ստացել էին 9 սան,,

«6» միավոր ստացել էին 6 սան,

«7» միավոր ստացել էին 3 սան,,

«8» միավոր ստացել էին 2 սան,

«9» միավոր ստացել էր 1 սան:

Փաստորեն աշխատանքի որակը 57% էր, առաջադիմությունը 100 %



Այնուհետև վարժարանի տնօրենի համապատասխան հրամանի հիման վրա անցկացրեցի դաշտային պարապմունք: Դաշտային պարապմունքը անց է կացվել ՀՀ ՊՆ 60925 զորամասի զորային հրաձգարանում՝ մարտական հրաձգային զենքերով:

Սովորողներին նախ ծանոթացրեցի հրաձգային զենքերի կառուցվածքին, բացատրեցի անվտանգության կանոնների պահպանման կարևորությունը հրաձգության ընթացքում:

Ծանոթացրեցի ՀՀ զինված ուժերում գործող կրակային պատրաստության ստուգման համար նախատեսված վարժություններին, որպես օրինակ բացատրվեց ՝ «1-ին ստուգողական վարժություն՝ զորատեսակների համար» վարժության գնահատման կարգը: Սաներին գործնականում ցուցադրվեց լուսածրող փափուշտների նշանակությունը, բացատրվեց դրանց տարբերությունը սովորական 7,62 մմ այլ փափուշտների համեմատ:

Սովորողներին անհատական տրվեց հնարավորություն ինքնուրույն քանդել-հավաքել Կալաշնիկովի ինքնաձիգը, ինչը հնարավորություն տվեց սաներին ավելի հստակ պատկերացնել ինքնաձիգի մեխանիզմների աշխատանքը հրաձգության ժամանակ: Մինչ հրաձգությանն անցնելը սաները ծանոթացան հրաձգային զենքի գործողության սկզբունքներին, ուսումնասիրեցին հրաձգային զենքերից արձակվող տարբեր նշանակության և տրամաչափի փափուշտներին, սովորեցին, ինչպես հրաձգային զենքը նշանազարկի բերել:



7,62 ПФО ПС



7,62 ПФО БП

Մեծ հետաքրքրությամբ սաները ծանոթացան Դրագունովի դիպուկահար հրացանի և 12,7 մմ «Սև նետ» խոշոր տրամաչափի դիպուկահար հրացանի հետ:

Պարապմունքը առավել հետաքրքիր դարձնելու համար սաներին հանձնարարվեց համացանցի միջոցով գտնել և ներկայացնել, թե աշխարհի տարբեր բանակների զինված ուժերում ինչպիսի հրաձգային զենքեր են կիրառվում:

Զեռքին ունենալով ՀՀ զինված ուժերի սպառազինության մեջ գործածվող հիմնական հրաձգային զենքերը սաները մեծ հետաքրքրությամբ ուսումնասիրեցին դրանց մարտավարատեխնիկական բնութագրերը՝ համապատասխան գրականության և պաստառների հիման վրա.

ԿԱԼԱՇՆԻԿՈՎԻ ԱՎՏՈՄԱՏ

«Սև Նետ« 12,7մմ խոշոր տրամաչափի դիպուկահար հրացան

ՀՀ ՊՆ 60925 զորամասի սպաների օգնությամբ սաներին հնարավորություն տրվեց կրակել խոշոր տրամաչափի դիպուկահար հրացանից , ինչպես նաև կրակ վարել ինքնաձիգից կրակահերթով և մենահատ կրակով՝ խոցելով տարբեր հեռավորության թիրախներ, ինչի շնորհիվ սաները ավելի լավ

պատկերացրեցին դրանց էական տարբերությունը:

Դաշտային պարապմունքից հետո սովորողներին ևս մեկ անգամ տրվեց թեստ՝ «հրաձգային զենք» թեմայով:

Թեստի արդյունքները էական փոփոխություն էին կրել բոլոր սաների մոտ, բացի այդ սովորողները թեստը ավարտեցին հատկացված ժամանակից ավելի շուտ:

Այս անգամ թեստի արդյունքները հետևյալն էին.

«4» միավոր ստացել էին 0 սան,

«5» միավոր ստացել էին 0 սան,,

«6» միավոր ստացել էին 4 սան,

«7» միավոր ստացել էին 5 սան,,

«8» միավոր ստացել էին 7 սան,

«9» միավոր ստացել էր 9 սան:

Տոկոսներով արտահայտված աշխատանքի առաջադիմությունը կազմում էր 100%, իսկ որակը 78%:



Երկու թեստերի արդյունքների համեմատական դիագրաման կունենահետևյալ տեսքը.



4. Եզրահանգումներ

Հետազոտությունը ցույց տվեց, որ սովորողները կարողացան կիրառել և զարգացնել իրենց գիտելիքները դաշտային պարապմունքի ընթացքում գործնականում ձեռք բերված հմտությունների շնորհիվ:

Հետազոտության ընթացքում ես համոզվեցի, որ՝

- ձեռք բերված տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հնարավորություն չունենալու դեպքում սովորողները դժվարանում են մտապահել և վերարտադրել այն,
- տեսողական ընկալումն առավել արդյունավետ է դարձնում առարկայի ուսումնասիրությունը,
- դաշտային պրակտիկ պարապմունքների ընթացքում լուծվում են այնպիսի

խնդիրներ, ինչպիսիք են՝ հմտությունների և կարողությունների զարգացում անհատական և խմբային վարժանքներով, տարբեր իրավիճակների մոդելավորում, իրական պայմաններում սովորողների խմբային համագործակցության զարգացում:

Հետևություն՝ ռազմագիտության դասընթացների ընթացքում «Դաշտային պարապմունքները» հնարավորություն են տալիս ապահովել.

- ինտենսիվ և հետաքրքիր դասապրոցես
- ավելի լուրջ վերաբերմունք առարկայի հանդեպ
- սովորողների կարգապահություն խմբային աշխատանքների ընթացքում
- մի շարք հմտությունների ձևավորում և զարգացում:

5. Գրականության ցանկ

1. Լ. Գևորգյանը «Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն»,
2. «Актуальные проблемы военно-педагогического исследования» http://militaryarticle.ru/nauka-i-voennaya-bezopasnost/2005/11897-aktualnye-problemy- voenno-pedagogicheskogo
3. Ռազմագիտության դասագիրք 8-11րդ դասարաններ,
4. Հրաձգության դասընթաց (ՀՀ Պաշտպանության նախարարություն)